

ՌՈՒՐԷՆ ԱՐԱՀԱՄԵԱՆ

ՇԱՀՆԱՄԷՆ ԵՒ ԶԻՆԱԿԱՆ ՎԵՊԸ

«Վէմ»-ի մէջ մի յօդածով Ֆէրդուսու եւ նրա Շահնամէի շուրջը մենք աշխատեցինք ընդհանուր գծերով ծանօթութիւն տալ իրանի մեծ վիպական բանաստեղծի եւ իր գործի մասին: Աւելի խոշոր չափերով այդ գործը արւած է մեր «Ֆէրդուսին եւ իր Շահնամէն» գրքում, որտեղ արւած է Շահնամէի բովանդակութիւնը եւ շօշափւած նրա հետ առնչութիւն ունեցող մի շարք հարցեր: Այդտեղ նաեւ համադրւած են մի կողմից իրանական, միւս կողմից հայկական, յունական, գերմանական եւ մասամբ ռուսական վէպերի զուգահեռները: Սակայն, մինչեւ մեծ բանաստեղծի յորելանի չըջանը մենք գաղափար չունէինք այն մասին, թէ կարելի է դոնել զուգահեռներ Շահնամէի եւ չինական մեծ վէպի մէջ եւ երեւան հանել երկու վէպերի համար էլ ընդհանուր աղբիւրներ:

Եթէ դիտելու լինենք Ֆէրդուսու մեծ էպոսէան, դժւար չի լինի նկատել, որ նրա առասպելական մասում, եթէ մի կողմ դնենք Սիւտանի աւանդութիւնները, կը մնայ բաւական աղքատիկ եւ չոր ու ցամաք նիւթ: Եւ, իրօք, Աւեստան եւ պահլաւական աղբիւրները, որտեղ պակսում են Սիւտանի աւանդութիւնները, վիպական մեծ նիւթ չեն պարունակում: Շահնամէի բովանդակութիւնը ճոխանում է Զարդուստանի (Սիւտանի) մեծ միջնաւէպով, որ ստեղծում է աշխարհի հսկաներ, ինչպէս են Գարշասպ, Սամ, Զալ, Ռոստամ, Զոհրաբ: Սրանց միանում է Սիւլուշի միջնաւէպը, որի խորթ մայրը՝ Սուղարէն Մահաւարանցի էր. ինքը՝ Սիւլուշ Սակաստանի մեծ հերոսի - Ռոստամի փայփայած ձեռնասունն էր, որին պարսական էր իր օրինակելի դաստիարակութեամբ:

Նոյն տարօրինակ երեւոյթը նկատւում է եւ չինական վէպում. համեմատաբար աւելի հարուստ այդ վէպը միանգամայն ճոխանում է Սիւտանի կամ Սէյիւտանի կամ Սակաստանի եւ կամ սակական վէպի տարբերակներով: Այդ երեւոյթը մատնացոյց արւո 1929-33թ. Sir J. C. Coyajée իր մի քանի յօդածներով, որոնք ղեկեղւած են «The Journal and Proceedings, Asiatic Society of Bengal» հանդիսում:

Երկու մեծ վէպերի (իրանական Շահնամէի եւ չինական Ֆէնգ - չէն - իէն - ի-ի) համեմատութիւնը ցոյց է տալիս, որ երկուսն էլ առատօրէն օգտուել են մի ընդհանուր սակական աղբիւրից.*) Ինչպէս յայտնի է, սակերը սկիւթական մի ցեղ էին եւ ապրում էին Սակաստանում, ներկայիս Սիստանում, Իրանի արեւելքում՝ Համուն լճի շուրջը։ Այս ցեղի ծոցից դուրս եկան, ինչպէս յիշեց, Ռոստամ եւ այլ փահլեւանները։ Այս ցեղի անունով Ռոստամն ստացել էր նախատական «Սագղի» անունը։

Երկու վէպերի միջեւ նմանութիւնները երբեմն այնքան ակնբախ են եւ մանրամասն, որ իրաւամբ դերազանցում են ամէն համեմատութիւն ոչ միայն հայկական, այլեւ եւրոպական վէպի հետ։ Գիտակցելով այս հարցի կարեւորութիւնը, մենք յարմար համարեցինք, օգտուելով վերոյիշեալ (թէպէտեւ անկատար) յօդածներէից, ընդհանուր գծերով ներկայացնել «Վէմ»-ի էջերում երկու վէպերի գլխաւոր դուզահեռները, որպէս լրացում մեր վերոյիշեալ գրքի։ Դէպքերի մանրամասնութիւնները կարելի է տեսնել մեր մատենանշած գրքում։

Անշուշտ, մասնագիտական նորանոր ուսումնասիրութիւններ հարկաւոր կը լինեն պարզելու, թէ ի՞նչ չափերի են հասնում Շահնամէի եւ չինական վէպի փոխադրեցութիւնները եւ յատկապէս Ֆէնգ-Շէն-իէն-ի-ի աղբիւրները Ֆէրդոսու վրա (որի համար բազմաթիւ յիշատակութիւններ կան Շահնամէում, ինչպէս օր. չինական Խաջանի պատերազմը Ռոստամի հետ, Ռոստամի Չինական Ծովի ափ գնալը Գաղի նետ բերելու համար եւայլն, եւայլն) եւ ի՞նչ չափերով երկու վէպերը օգտագործել են սակական աղբիւրները։

Նկատենք, որ երկու վէպերին էլ հարազատ է չարի եւ բարու պայքարը, որ տեղի է ունենում դեւերի օգնութեամբ եւ մասնակցութեամբ, ինչպէս են Փուլանդամը, Աքվան դեւ եւայլն։ Չինական վէպն աւելի գերբնական միտումներ ունի, աւելի գեղարեստական է եւ խորհրդածութիւններն աւելի հիմնաւորւած են ու խորը։ Նրա համեմատութեամբ Ֆէրդոսին, որ ծնունդ է աւելի ըստ կեպտիկ շրջանի, աւելի իրապաշտ է, բայց եւ աւելի ողբերգական։

Զուգահեռների մէջ կենտրոնական տեղ է բռնում Զոհրաբի

*) Այդ մասին Ֆէրդոսին իր կողմից ուղղակի յայտարարում է հետեւեալ տողերում.

Կեանքիս կէսը եւ կորստի եմ մատնել, Ռոստամին ենթակայ էր միայն Սիստան, Ռոստամի անունով աշխարհն եմ լցրել. Ես դարձրի նրան վէպիս փառեւան։

(պարսկերէն Սոհրաբ, չինարէն Նօ Շա) միջնադէպը, որ բնականաբար վերաբերում է եւ Ռոստամին: Ինչպէս յայտնի է, «Ռոստամ եւ Զոհրաբ» միջնադէպը Շահնամէի պսակն է կազմում:

Շահնամէի սակական հերոսների մէջ ամենից աւելի բարձրի դուրս է Ռոստամը, մինչդեռ չինական վէպում կենտրոնական տեղ է բռնում ոչ թէ Լի Յինդը՝ Ռոստամի կրկնակը, այլ աստածային աղեղնաձիգը Եի եւ մանաւանդ Նօ-Շա, որոնք համապատասխանում են Գարշասպին եւ Զոհրաբին: Նօ-Շան է, որ սպանում է ջրերի դեւապետին եւ յաղթահարում Մէյ Շանի Եօթն դեւերին, որոնցից առաջինը զուգադիպում է Գանդարեւայի սպանութեան Գարշասպի ձեռքով, իսկ երկրորդը Ռոստամի նախնիներին (Հաֆտխանին) Մազանդերանում: Այսպիսով Նօղայի դերն, ի հարկէ, անհամեմատ աւելի մեծ է քան Զոհրաբինը եւ նրա սպանելը հօր ձեռքով աւելի եւս խորացնում է ողբերգութիւնը:

Յայտնի է, որ Ռոստամ Զոհրաբի մօրը Թահմինէին տալիս է Վարդարանի մի հատիկ պայտանով, որ եթէ նրանց տղայ ծնւի, նրան այդ ապարանջանով իր մօտ ուղարկի: Նօ-Շան նոյնպէս ունէր ապարանջան, բայց դա մի վահանակ էր հրաշագործ զօրութեամբ, որի ուժով նա մեծամեծ սխրագործութիւններ է կատարում: Այս վահանակի ստեղծման գործում չինական երեւակայութիւնը աւելի խոր էր, ինչպէս եւ գերբնական միտումները:

Զոհրաբի մանկութեան վերաբերմամբ երկու վէպերն էլ նման տեղեկութիւններ ունեն — նրա արագ աճելու, ուժի մասին եւայլն:

Զոհրաբի միջնադէպում, իրան արչաւելու սկզբում, հանդէս է գալիս հերոսուհի Գորդաֆարիդ, որ բերդապետ Հաջրի գերի ընկնելուց յետոյ իր վրա է առնում բերդի պաշտպանութիւնը եւ մենամարտում Զոհրաբի հետ. սա խլում է նրա սաղաւարտը եւ երբ բացւում են Գորդաֆարիդի մազերը, Զոհրաբ փնայում է նրան: Չինական վէպում Գորդաֆարիդին համապատասխանում է Տէնդ-չան-իւ, բերդապետի աղջիկը, որ հօր վէրք ստանալուց յետոյ բերդի պաշտպան է դուրս գալիս եւ Նօ Շան (Զոհրաբը) իր հերոս ընկերների հետ մեծ դժւարութեամբ է կարողանում խել ամրոցը հերոսուհուց, որը գերի է ընկնում:

Շահնամէում հօր եւ որդու մենամարտի երկրորդ հանդիպումին յաղթական Զոհրաբը անձանթ հօրը տապալում է գետին եւ հանում դաշոյնը վերջ դնելու համար նրա կեանքին: Բայց Ռոստամի աղերսանքն ազատում է նրան անխուսափելի մահից: Փէնդ-Շէն-իէն-ի-ում այս պատահարը կրկնւում է երեք անգամ, մինչեւ որ Նօ Շան ճանաչում է հօրը: Հօր ուժեղանալը երկու վէպում էլ տեղի է

ունենում գերբնական ճանապարհով. Ռոստամ խնդրում է Աստծուն վերադարձնել իրեն պահ տւած ոյժը, իսկ Լի Յինգը թաղնում է տաօիստ սուրբի յետեւը, որ թքում է նրա վրա եւ դրանով՝ աւելացնում նրա ոյժը:

Զոհրարը իր ասպարէզ ելնելուց մինչեւ վերջ մի ատելութիւն եւ արհամարհանք է տածում դէպի Քէյ Քաուսը. նա որոշում է արմատախիւ անել նրա իշխանութիւնը եւ նրա տեղ թագաւորեցնել իր հօրը:

Կը տապալեմ գահը եւ Քէյ Քաուսի,
իրանից կը կտրեմ արմատը թուսի:

Այս հարցում էլ Ֆէն-Շէն-իէն-ին աւելի չըջահայեաց է. նրա մէջ Նօ-Շան վերակենդանանալով տաօյական սրբի միջոցով, արգէն իրազործում է Զոհրարի երազները:

Զոհրարի ողբերգութիւնը անհուն է նրանով, որ Ռոստամից էլ մեծ ապագայ խոստացող այդ հերոսը կեանքի դարունը դեռ չտեսած ընկաւ՝ հօր սուրը կրծքում: Այն նուշգարուն (բաւասանը), որի համար այնքան ի դուր աղերսեց Ռոստամը Քէյ Քաուսին, իսկոյն գտնեց տաօյական սրբի մօտ, որի միջոցով չինական վէպը կեանք տւեց երիտասարդ հերոսին եւ որի հետեւանքով զրկեց մի նշանաւոր էֆֆեկտից, բայց դրա փոխարէն հարստացաւ Նօ Շայի նորանոր սխրագործութիւններով:

Քէյ Քաուս (չինական վէպում Զու Վանգ). Այս թագաւորը, որ Քէյ Քոբադի որդին էր, իշխել է իրանում 150 տարի եւ այդ չըջանում են զլխաւորապէս ծաւալում Ռոստամի սխրագործունում եւ զլխաւորապէս ծաւալում Ռոստամի սխրագործունում: Ֆէրգովսու վերաբերմունքը դէպի նա երկդիմի է. մերթ նա ներկայացնում է նրան որպէս իրանի յարգելի թագաւորներից մէկը, մերթ որպէս քմահաճօյքներով լի մի թեթեւ անձնաւորութիւն, ենթակայ իր կնոջ Սուդարէի եւ էրլիսի*) ազդեցութեան: Նրա մասին նա յարմար է համարում ասել նոյնիսկ՝

Թէ բարի արմատից չար գիւղեր ափին,
Բուրի արմատն երբեք դու մի՛ այպանի.
Թէ զգետնի որդին հօր անունը բարի,
Նա որդի չէ, նրան օտար անունի:

Նման բացասական վերաբերմունք դէպի Քէյ Քաուսը բացակայում է Աւեստայում եւ պահլաւերէն ընագրերում. Աւեստայում պակտում է նաեւ Սուդարէի հետապնդումը Սիաւուշին. այս բոլորը գալիս է չինական աղբիւրներից, որտեղ Քէյ Քաուսի կրկնակը -

*) Սատամայ:

Չօռ-Վանդ, մի թուլամորթ, կնոջ հրամաններին ենթակայ եւ արհամարհելի անձնաւորութիւն է :

Սուդարէ (չիմակ. վէպի Սու-Թա-Բի) .- Սուդարէն Համաւարանի թաղաւորին աղջիկն էր, որի պատճառով Քէյ Քառւս Համաւարանի թաղաւորի կողմից նենդութեամբ կալանաւորուել եւ դռնակըն էր դրուել : Համաւարանի մասին ենթադրուում է, որ նա Արարիայի երկրներէ մէկը (Եմենը) պէտք է լինի, իսկ Մարքուարտ կարծում է, որ Համաւարանը գտնուում է Սակաստանում : Վերջին ենթադրութեամբ, որ ոյժ է ստանում Ռոսստոմի մօր՝ Ռուդարէի անւան նման հնչեցնելով եւ զանաւոր, թէ ինչու նա սակական վէպի հերոսուհի է դարձել :

Չինական վէպի մէջ նա կոչուում է Սու-Թա-քի, որ մեծ չափով յիշեցնում է պարսկական անունը : Երկու վէպի մէջ էլ հերոսուհին իր ամուսնու չար հրեշտակն է : Երկու անգամ էլ նա զօրեղ է իր մեքենայութիւններով : Սուդարէն իր խորթ որդուն - Սիւվուշին ոչնչացնելու համար փորձութեան խարոյկ է պատրաստում, իսկ Սու-Թաքին - վառարան. երկուսն էլ ունենում են նման վախճան. Սուդարէին սպանում է Ռոստամը, լսելով Սիւվուշի մահը. իսկ Սու-Թաքին՝ յաղթական զօրավար Յէյա, որովհետեւ միւսները չէին կարողանում դէմ դնել նրա հմայքին : Սու-Թաքին որպէս տիպ աւելի ուժեղ է. նա չի բաւականանում խորթ որդուն հալածելով մինչեւ նրա թշնամու մօտ ապաւինելը. նա չարաչար մահով սպանել է տալիս նախկին թագուհի Քիանդին, որ վէպի ամենագործօն եւ ողբերգական դէմքերից է եւ Շահնամէում համապատասխանում է Սիւվուշի մօրը, որի սպանման մասին սակայն խօսք չկայ :

Սորթ որդուն գրաւելու պարագաները գեղեցիկ են նկարագրւած երկու վէպերում էլ, բայց չինականում գերազանց է. Շահնամէում Սուդարէն իբր թէ ուզում է իր աղջկան կնութեան տալ Սիւվուշին, խնդրում է Քառւսին ուղարկել նրան իր մօտ հարեմ եւ այնտեղ նա ինքն առաջարկութիւններ է անում նրան : Մինչդեռ Սու-Թաքին հրաւիրում է Եին Քիաոյին սովորեցնել նրան վին նազել եւ ապա գործ է դնում իր բոլոր հրապոյրները : Այս մեքենայութիւնների համար Սուդարէն դրդում է էրլիսը (սատանան), իսկ Սու-Թաքին Նիքուս աստուծուհին, որ աղւեսաղբերն ստիպում է տիրանալ Սու-Թաքիի հոգուն : Իր վախճանի ժամանակ Սու-Թաքին անձնաւորումն էր աղէտադեւի :

Սիււուշ (չիմակ. վէպի Եին Քիաո) .- Սիւվուշի միջադէպը Շահնամէի ամենասրտառուչ հատուծներից մէկն է : Երկու վէպն էլ նկարագրում են մի առաքինի թագաժառանգ, որ սովորաբար հետա-

պընդման է ենթարկւում խորթ մօր կողմից մինչեւ այն աստիճան, որ ստիպւած է լինում ապաւինել հօր թշնամու մօտ, որտեղ տմարդաբար սպանւում է եւ սուրբ է հռչակւում ժողովրդի կողմից ու պաշտւում :

Շահնամէնի չքեղ տեսարաններից է Սիււվուշի խարոյկի բոցերի միջով անցնելը : Գանի որ նրա աղնութիւնը կասկածի է ենթարկւած, որոշւում է նրան կրակով փորձել : Հարիւր ուղտի բեռ փայտից երկու հսկայական խարոյկներ են շինում եւ սեւ նաւթը վրան ածելով վառում : Սիււվուշը սեւ ձիու վրա հանդիսաւոր կերպով անցնում է խարոյկի միջից : Մինչդեռ չինական վէպը կառուցանում է մի արուերայ սլեն երկու սաժէն բարձրութեամբ եւ եօթը ոտնաչափ շրջապատով : Սիւնն ունէր երեք բացւածք կրակը հրահրելու եւ զոհերին ներս դնելու համար : Առաջին զոհը սակայն թագաժառանգը Հէյ, այլ նրա ընկեր եւ փաստաբան Չաօքին : Վէպը ահռելի դոյներով է նկարագրում նրա տանջալից մահը կրակի բոցերից :

Այնուհետեւ երկու վէպերն էլ իրենց հալածւած հերոսին ստիպում են ապաւինել իրենց հօր թշնամու մօտ եւ չինական վէպը նոյնիսկ գէնք է տալիս Եին Գիւաօյի ձեռքը կուսելու իր հօր դէմ : Նրկատենք, որ այդ հեշտ էր անել չինական վէպին, որովհետեւ այդտեղ հակամարտութիւնը ոչ թէ երկու թշնամի ազգերի մէջ էր, ինչպէս Իրանի եւ Թուրանի, այլ քաղաքացիական էր, երկու իշխանների՝ Չու Վանգի եւ Վու Վանգի միջեւ :

Ըստ չինական աղբիւրների Չու Վանգ զօրավարներ է ուղարկւում հետապնդելու փախստականին, իսկ ըստ Շահնամէնի Քէյ Գաուս ուղարկւում է Թուսին Սիււվուշին հրամանատարութիւնից զրկելու համար : Երկու վէպի մէջ էլ հերոսը սպանւում է թշնամուց : Շահնամէնում դրա դրդապատճառ ծառայում են Թուրանի Աֆրասեար թագաւորի եղբայր Գարսիւվաղի դաւերը : Սիււվուշի մորթւած տեղում մի բոյս է կանաչում : Եին Գիւաօն նոյնպէս սպանւում է հօր կողմն անցած լինելու պատճառով. նրա մահը տեղի է ունենում չինական դաժանութեամբ : Նրա մարմինը կենդանույն թաղում են գետնի տակ, իսկ գետնի երեսին մնացած գլխի վրայով անցնում է դիւղացու արօրը ու վերջ տալիս թագաժառանգի կենքիին եւ այսպիսով նրա արիւնն էլ ոռոգում է դաշտի բուսականութիւնը :

Հերոսի մահը երկու վէպերում էլ երազի միջոցով նախազգուշացումներ է առաջացնում : Այսպիսի նախազգուշացումներ ստանում են Շահնամէնում Թուս՝ Թուրանի դէմ զօտեպնդելու եւ Գուսդարգ - իր օրդուն՝ Գիւլին ուղարկելու Քէյ Սոսրովին որոնելու : Նոյնը տեղի է ունենում չինական վէպում, որտեղ Չու Վանգը երա-

դուժ նախադեռչացում է սպանւած որդուց իրեն սպառնացող վր-
տանդի դէմ :

Միջնադէպի բարոյական կողմն աւելի խոր է չինական վէպում ,
որտեղ հեղինակը դտնւում է տայօական ուժեղ ազդեցութեան տակ :
Մինչդեռ Շահնամէում միջնադէպը լոկ մի ողբերգութիւն է , որ
պայմանաւորւած է խորթ մօր հետապնդումներով եւ Սիւսիւնի իր
հօր թշնամու մօտ փախչելով : Եին Քիաօի ողբերգութիւնը բարդա-
նում է բարոյական շարժառիթներով . նա պէտք է կողմնակից լի-
նէր իր հօր , բայց միւս կողմից պէտք է հանէր եւ մօր վրէժը , որ
չարաչար սպանել էր նոյն հօր եւ խորթ մօր հրամանով , մանա-
ւանդ որ այդ ուղղութեամբ նրան քաջալերում էր իր տաօիստ դաս-
տիարակը , որին չհնազանդւելը , ինչպէս պէտք էր սպասել , կողմ-
նակի պատճառ է լինում նրա անագորոյն մահւան :

Նմանութիւնները երկու վէպերի մէջ բազմաթիւ են . այսպէս՝
համեմատութեան առարկաներ կարող են ծառայել Գարշասպի սըխ-
րապործութիւնները , Զալի եւ Ռոստամի ծնունդը , Սիմորղը ,*)
Ռոստամի կռիւը սպիտակ փղի հետ , Սպիտակ դեւին սպանելը , Ռոս-
տամի կռիւը Էսֆանդեարի հետ եւայլն :

Կանգ առնենք մի փոքր Աբլան եւ Փուլադվանդ դեւերի եւ տա-
սընեմէկ հերոսների կուլի վրա :

Աբլան դեւը , որ ըստ Ֆէրդուսու պահլաւերէն Քուան է կոչ-
ւում (որ յիշեցնում է չինական Kuan-Jin եւ այլ անունները) , Շահ-
նամէում ցիւի տեսք ունէր եւ պատած էր յովազի բծերով : Ըստ ե-
րեւոյթին նա հողմի դեւն էր . ուղած ժամանակ նա անհետանում էր ,
յաճախ փոխւում էր հողմի : Նա արագութեամբ բարձրացնում է « փը-
ղամարմին » (փիլիթան) Ռոստամին նրա քնած ժամանակ եւ նետում
է ծովը :

Չինական Աբլանը Ֆէի Լիէն , որ հողմի դեւն է , եղնիկի մարմին եւ
ընձառիւծի ծաւալ ունի . նա ուղղում է հողմը որ կողմ եւ կամե-
նում է , ստանում է դեղին գոյն եւ օձի սրչ եւ յիշեցնում է այն
փոփոխութիւնները , որ նրան վերագրում է Ֆէրդուսին .

Սա Աբլան դեւը լոկ կարող է լինել .

Հողմին անհնարին է նետահարել :

Փուլադվանդ դեւին հրաւիրում է Աֆրասիար կուռիւս Ռոստա-
մի դէմ . նրան չինական վէպում համապատասխանում են դեւերի
խմբեր , ի միջի այլոց Փօ-Լու-թաօյի (Սպիտակ եղջերու կղզու)
դեւերը :

.....

*) Առասպելական քոչուն , որ մեծ դեր է խաղում Սիստամի վէպում : —

Տասն եւ մէկ հերոսների կռիւը մի տեսակ աւարտաբանութիւն է հին կուռղնիւրի գործերի: Նրկու վէպում էլ կռիւը կազմակերպւում է մեծ խնամքով եւ հանդիսաւորութեամբ, բայց պարսկական վէպը կորցնում է շնորհիւ իր մի միտումի, որ բոլոր 11 հակառակորդները պարտւած լինեն: Եւ այդպէս, Թուրանի բոլոր կուռղ հերոսները — Քէլբադ, Գորույի, Սիամաք եւայլն մի առ մի ընկնում են իրանի հերոսների՝ Փարիբորզի, Գիվի, Գորադէի եւ այլոց ձեռքից, մինչդեռ չինական վէպում կռիւը մեծ տարակուսանք է առաջացնում եւ Թզէայի կողմը մեծ կորուստներից յետոյ միայն մի քանի օրւայ ընթացքում կարողանում է զրաւել մրցարանը:

Թեհրան.

